

ԽԱՀԱՄ ԺԿԱ-ԻՆ ԿԻՑ ԲԱՐՁՐԱԳՈՒՅԹՆ ԴՊՐՈՅՑՆԵՐԻ ՀԱՄԱՄԻԱՀԻՑԵԱՎԱՆ
ԿՈՄԻՏԵ
ԿԱՐԼ ՄԱՐՔՍԻ ԱՆՎԱՆ ՅԵՐԵՎԱՆԻ ՊՈՂԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԿԱՆՈՆԵՐ

ՅԵՎ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐ

ՅԵՐԵՎԱՆԻ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
1940 թՎԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

6(071.1)

5-81

ՊՈՂԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ — 1940

ԽՍՀՄ ԺԿԵ-ԻՆ ԿԻՑ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴՊՐՈՅԵԿՏԵՐԻ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵ
ԿԱՐԼ ՄԱՐՔՍԻ ԱՆՎԱՆ ՅԵՐԵՎԱՆԻ ՊՈԼԻՏԵԿՆԻԿԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ

6(07/1)

6-81

7

ԿԱՆՈՆԵՐ
ՅԵՎ
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԾՐԱԳՐԵՐ

ՅԵՐԵՎԱՆԻ ՊՈԼԻՏԵԿՆԻԿԱՆ ԻՆՍԻՏՈՒՏԻ
1940 թվի ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ



ՊՈԼԻՏԵԿՆԻԿ ԻՆՍԻՏՈՒՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ—1940

ԸՆԿԵՐ ԱՏՎԱԼԻՒՄԻ ՃԱՌՈՅ

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՑՆ ԴՊՐՈՑԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԿՐԵՄԼՈՒՄ ՏԵՂԻ
ՈՒՆԵՑԱԾ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆԸ

1938 թ. մայիսի 17-ին

ԸՆԿԵՐՆԵՐ :

Թույլ տվեք առաջարկել գիտության կենացը, նրա ծաղկ-
ման կենացը, գիտության մարդկանց կենացը:

Գիտության ծաղկման կենացը, այն գիտության, վորը չե-
պարազվում ժողովրդից, իրեն հեռու չի պահում ժողովրդից, այլ
պատրաստ և ծառայելու ժողովրդին, պատրաստ և ժողովրդին
հաղորդելու գիտության բոլոր նվաճումները, վորն սպասարկում
և ժողովրդին վոչ թե հարկադրաբար, այլ կամավոր կերպով, հա-
ճույքով: (Ծափահարություններ):

Գիտության ծաղկման կենացը, այն գիտության, վորն իր
հին ու ճանաչված գեկավարներին թույլ չի տալիս ինքնազո՞-
կերպով պարփակվել գիտության քուրմերի կեղեկի մեջ, գիտու-
թյան մոնոպոլիստների կեղեկի մեջ, վորը հասկանում և գիտու-
թյան յերիտասարդ աշխատողների հետ գիտության հին աշխա-
տողների դաշնքի իմաստը, նշանակությունը, ամենազորությու-
նը, վորը գիտության բոլոր դռները կամավոր կերպով ու հա-
ճույքով բաց և անում մեր յերկրի յերիտասարդ ուժերի առաջ
և նրանց հնարավորություն և տալիս նվաճելու գիտության բար-
ձունքները, վորն ընդունում է, վոր ապագան պատկանում և գի-
տության յերիտասարդությանը: (Ծափահարություններ):

Գիտության ծաղկման կենացը, այն գիտության, վորի մար-
դիկ, հասկանալով գիտության մեջ հաստատված տրադիցիաների
ուժն ու նշանակությունը և դրանք հմտորեն ոգտագործելով ի-
շահ գիտության, այնուամենայնիվ չեն ուղղում լինել այդ տրա-
դիցիաների ստրուկները, վորն ունի հին տրադիցիաները, նորմա-
ները, դիրքավորումները փշբելու համարձակություն, վճռակա-



2975

40

նություն, յերբ դրանք դառնում են հնացած, յերբ դրանք արդելակի յեն վերածվում առաջխաղացման համար, և վորը կարողանում ե ստեղծել նոր տրաղիցիաներ, նոր նորմաներ, նոր դիրքավորումներ։ (Ծափահարություններ)։

Դիտությունն իր զարգացման մեջ ճանաչում ե վոչ պակաս քաջարի մարդիկ, վորոնք կարողանում եյին վշրել հինը և ստեղծել նորը, չնայած ամեն տեսակ խոչընդուներին, հակառակ ամեն բանի։ Գիտության այնպիսի քաջարիներ, ինչպես Գալիլեյը, Դարվինը և շատ ուրիշները, հանրածանոթ են։ Յես կուզեյի կանդանել գիտության այդպիսի կորիֆեյներից մեկի վրա, վորը միենույն ժամանակ հանդիսանում ե մեր ժամանակի մեծագույն մարդը։ Յես նկատի ունեմ Լենինին, մեր ուսուցչին, մեր դաստիարակին։ (Ծափահարություններ)։ Հիշեցեք 1917 թիվը։ Ռուսաստանի հասարակական զարգացման գիտակնն անալիգի հիման վրա, միջազգային գրության գիտական անալիգի հիման վրա Լենինն այն ժամանակ յեկազ այն յեղրակացության, վոր դրությունից միակ յելքը հանդիսանում ե սոցիալիզմի հաղթանակը մուսաստանում։ Այդ ավելի քան անսպասելի յեղրակացություն եր այն ժամանակվա գիտության շատ մարդկանց համար։ Պէտքանովը, գիտության աշքի ընկնող մարդկանցից մեկը, այն ժամանակ արհամարհանքով եր խոսում լենինի մասին՝ պնդելով, թե լենինը դանվում է «զառանցանքի մեջ»։ Գիտության այլ, վոչ պակաս հայտնի մարդիկ պնդում եյին, թե «լենինը խելադարվել ե», թե նրան հարկավոր ե թալցնել վորեւ հեռու տեղ։ Այն ժամանակ լենինի դեմ վոռնում եյին գիտության բոլոր ու ամեն տեսակ մարդիկ, վորպես մի մարդու, վորը քանդում ե գիտությունը։ Բայց լենինը չլախեցալ հոսանքին դեմ զնալուց, քարցածությանը դեմ դնալուց։ Յել լենինը հաղթեց։ (Ծափահարություններ)։

Ահա ձեզ գիտության քաջարիի տիպարը, վոր համարձակորեն պայքար ե մզում հնացած գիտության դեմ և ճանապարհ հարթում նոր գիտության համար։

Այնպես ել ե լինում, վոր գիտության ու տեխնիկայի նոր ուղիներ յերեմն հարթում են գիտության մեջ վոչ հանրածանոթ մարդիկ, այլ գիտական աշխարհում միանդամայն անհայտ մարդիկ, հասարակ մարդիկ, պրակտիկները, գործի նորարարներ։ Այստեղ ընդհանուր սեղանի շուրջը նստած են ընկերներ նորախանովը և Պապանինը։ Արդիկ, վորոնք գիտական աշ-

խարհում անհայտ են, վորոնք չունեն զիտական աստիճաններ, իրենց գործի պրակտիկներն են։ Բայց ո՞ւմ հայտնի չեն, վոր Ստախանովն ու ստախանովականներն արդյունաբերության ասպարիզում իրենց գործնական աշխատանքում դեն շվրտեցին, վորոնք հանացած, գոյություն ունեցող այն նորմաները, վորոնք սահմանական եյին գիտության ու տեխնիկայի հայտնի մարդկանց կողմից, և մացրին նոր նորմաներ, վորոնք համապատասխանում են խեկան գիտության ու տեխնիկայի պահանջներին։ Ո՞ւմ հայտնի չեն, վոր Պապանինն ու պապանինականները գրեյփող սապցադաշտի վրա կատարած իրենց գործնական աշխատանքով անցողակիորեն, առանց հատուկ դժվարության, դեն շվրտեցին Արկտիկայի մասին յեղած հին պատկերացումը վորպես հնացած և սահմանեցին նորը, վորը համապատասխանում ե խեկան գիտության պահանջներին։ Ո՞վ կարող ե ժխտել, վոր Ստախանովը և Պապանինը նորարարներ են գիտության մեջ, մեր առաջավոր գիտության մարդիկն են։

Ահա թե ել ինչպիսի «հրաշքներ» են լինում գիտության մեջ։

Յես խոսեցի գիտության մասին։ Բայց լինում ե ամեն տեսակ գիտություն։ Այն գիտությունը, վորի մասին յես խոսեցի, կոչվում ե ԱՌԱՋԱՎՈՐ։

Մեր առաջավոր գիտության ծաղկման կենացը։

Առաջարկոր գիտության մարդկանց կենացը։

Լենինի՛ և լենինիդմի՛ կենացը։

Ստախանովի՛ և ստախանովականների՛ կենացը։

Պապանինի՛ և պապանինականների՛ կենացը։ (Ծափահարություններ)։

«Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն»-
ների Միության Սահմանադրության 121-րդ հոդվածի
համաձայն՝ քարձրագույն ուսումնական հաստատություններն
իրագործում են և ԽՍՀ Միության բոլոր ֆակուլտետների կողմանը իրավունքը և նպատակը ունեն պատրաս-
տելու պառաջակը գիտությանը և տեխնիկային տիրապե-
տելու ընդունակ, գիտական սոցիալիզմի գիտելիքներով
զինված, խորհրդային հայրենիքը պաշտպանելու պատ-
րաստ և կոմունիստական հասարակության կառուցման
գործին անհնուրացորեն նվիրված կադրեր»:

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՏԻՊԱՅԻՆ ԿԱՆՈՆԸԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ԿԱՐԼ ՄԱՐՔՍԻ ԱՆՎԱՆ ՅԵՐԵՎԱՆԻ ՊՈԼԻՏԵԿՆԻԿԻ ԻՆՍԻՏՈՒՏԸ ՊԱՏՐԱՍՈՒՄ Ե ԶԱՆԱԶԱՆ ՄԱՆԱԳԻ- ՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽԾԵՆԵՐՆԵՐ ՅԵՎ ՈՒՆԻ ՅԵՑԵՎԾՈՒ ՏԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԸ

1. Քիմիա-տեխնոլոգիական, հայկական և ռուսական սեկ-
տորներով
2. Շինարարական
3. Ավտո-ճանապարհային
4. Ցերեկոյան բաժին

2. ԱՄԲԻՈՆՆԵՐՆ ՈՒ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԴԻՍԹԻՊԼԻՆՆԵՐԸ Ինստիտուտն ունի հետևյալ ամբիոններն ու ինքնուրույն դիսցիպլինները

1. Մարքսիզմ-լենինիզմի ամբիոն
2. Բարձրագույն մաթեմատիկայի ամբիոն
3. Ֆիզիկայի ամբիոն
4. Տեսական մեխանիկայի ամբիոն
5. Գրաֆիկայի ամբիոն
6. Ընդհանուր և անալիտիկ քիմիայի ամբիոն
7. Գեոդեզիայի ամբիոն
8. Կիրառական մեխանիկայի ամբիոն
9. Նյութերի դիմադրության ամբիոն
10. Որդանական քիմիայի ամբիոն
11. Ֆիզիկական և կոլորիդալ քիմիայի ամբիոն
12. Ելեկտրոտեխնիկայի ամբիոն
13. Շինարարական նյութերի տեխնոլոգիայի ամբիոն
14. Կառուցվածքների ստատիկայի և կամուրջների ամբիոն
15. Սինթետիկ կառուցուկի ամբիոն
16. Տեխնիկական ելեկտրոքիմիայի և ելեկտրոթերմիայի
ամբիոն
17. Ընդհանուր քիմիական տեխնոլոգիայի ամբիոն

18. Ճարտարապետության ամբիոն
 19. Շինարարական արտադրության ամբիոն
 20. Հիղըռոտեխնիկական կառուցվածքների ամբիոն
 21. Զբային եներգիայի ուժագործման ամբիոն
 22. Շինարարական կոնսորցիաների ամբիոն
 23. Ճանապարհային գործի ամբիոն
 24. Ռազմական ամբիոն
 25. Տեղմողինամիկայի և ջերմուտեխնիկայի ամբիոն
 26. Հիղըռավիկայի ամբիոն
 27. Ճանապարհային մեքենաների ամբիոն

Ինքնուրույն դիսցիլինություն

28. Գեոլոգիա
 29. Սանտեխնիկա
 30. Ռուսաց լեզու
 31. Հայոց լեզու
 32. Ռուսար լեզու
 33. Ֆիզիոլոգուրա
 34. Հակահրդեհային գործ և անվտանգության տեխնիկա:
 Ամբիոններն ունեն 13 լաբորատորիաներ և 12 կաբինետներ:
 3. Բոլոր ֆակուլտետներում ուսման տևողությունը 5 ամառի յեւ, ներառյալ դիսլումային նախադիմն ու արտադրական պրակտիկան:

Դիսլումային նախադիմի կատարման համար հատկացվում են 24 վեցորյակ: Արտադրական պրակտիկային քիմիա-տեխնոլոգիական և շինարարական ֆակուլտետներում տրվում են 28 վեցորյակ, իսկ ավտո-մանավարհայինում՝ 24:

Այն ուսանողները, վորոնք ուսման ընթացքում ստանում են ամբողջովին «գերազանց» և «լավ» դնահատականներ և դիսլումային աշխատանքները կատարում ու պաշտպանում են բարձր ցուցանիշներով, ստանում են գերազանց դիպլոմ: Մնացածներին արվում են դիպլոմ ինստիտուտն ավարտելու վերաբերյալ:

Բացի արդյունաբերական, նախադաշտային և շինարարական ձեռնարկություններից, ինստիտուտ ավարտողները, ասպիրանտուրայի կուրսն անցնելուց հետո, կարող են աշխատել նաև դիտահետազոտական հիմնարկներում և ավանդել ԲՈՒՀ-երում իրենց մասնագիտության համապատասխան դիսցիլիններ:

Ասպիրանտուրա ընդունվելու ժամանակ գերադասությունը տրվում է այն ուսանողներին, վորոնք ստացել են գերազանց դիպլոմ:

Մասնագիտություններ

1) Քիմիա-տեխնոլոգիական ֆակուլտետ ավարտողները ստանում են ինժեներ-տեխնոլոգի կոչում ըստ հետևյալ մասնագիտությունների՝

ա) ելեկտրոքիմիայի արդյունաբերության,

բ) սինթետիկ կառուչուկի և որդանական պրոդուկտների արդյունաբերության գծով:

Քիմիկո-տեխնոլոգիական ֆակուլտետի ուսումնական պլանը բովանդակում է 2 մասնագիտությունների համար ընդհանուր 20 գիսցիպլին, 4-8 մասնագիտական դիսցիլինն յուրաքանչյուր մասնագիտության համար, և նախատեսում են կատարել հիմնական հաշվային դիսցիլիններից 4 կուրսային նախագիծ:

Արտադրական պրակտիկան կազմակերպվում է մոլության լավագույն ձեռնարկություններում 3 հերթով. առաջինը կազմակերպվում է 3-րդ կուրսում 4 վեցորյակ տեսողությամբ և կրում են ընդհանուր բնույթ: Յերկրորդ և յերրորդ հերթերը կազմակերպվում են 5-րդ և 6-րդ կուրսերում, յուրաքանչյուրը 11 վեցորյակ տեսողությամբ:

Քիմիա-տեխնոլոգիական ֆակուլտետ ավարտողները կարող են աշխատել քիմիական գործարաններում վորապես հերթափոխի ինժեներներ, ցեխերի, բաժինների պետեր, գլխավոր ինժեներներ, դործարանների տեխնիկական դիրեկտորներ, ինչպես և գիտահետազոտական հիմնարկներում, վորապես դիտական աշխատաղներ:

2) Շինարարական ֆակուլտետ ավարտողները ստանում են ինժեներ-շինարարի կոչում ըստ հետևյալ մասնագիտությունների՝

1. Արդյունաբերական և քաղաքացիական շինարարության գծով:

2. Հիղըռատեխնիկական կառուչուլածքների գծով:

Այսուղ նույնպես արտադրական պրակտիկան անց է կացվում 3 հերթի: Առաջին և յերրորդ կուրսում 4 վեցորյակ տեսողություն ունի և գլուխում է շինարարության հետ նախնական ծանոթացման բնույթ: Յերկրորդ պրակտիկական կազմակերպվում է 3-րդ կուրսում 11 վեցորյակ տեսողությամբ, իսկ 3-րդ պրակտիկական 4-րդ կուրսում՝ 16 վեցորյակ տեսողությամբ:

Վերջին յերկու պրակտիկաների ընթացքում ուսանողներն ամբազնդում և խորացնում են ձեռք բերված տեսական գիտելիքները։ Յերկրորդ և յերրորդ պրակտիկաները կազմակերպվում են Սիության խոշոր շինարարական որյեկտների վրա։ Արտադրական պրակտիկայից բացի, ուսումնական պլանում «Դեռէկվիայի» գծով նախատեսված և ուսումնական պրակտիկա 4 վեցորյակ աևողությամբ։

Շինարարական Փակուլտետի ուսման պլանը բաղկացած է 29 ընդհանուր և մասնագիտական դիսցիլիններից ու մի շարք Փակուլտատիվ առարկաներից։ Պլանում նախատեսված ե կատարել 7 կուրսային նախադիմ։

Շինարարական Փակուլտետ ավարտողները կարող են աշխատել վրավես արդյունարերական և քաղաքացիական շինարարության ճարտարագետներ, հիմքութիմների կառուցվածքների ճարտարագետներ, ինչպես արտադրության մեջ, նույնպես և նախադաշտյան կազմակերպություններում։

3) Ավտո-ճանապարհային Փակուլտետ ավարտողներն ուսումնում են ավտոմոբիլային ճանապարհների և կամուրջների կառուցվածքների շինարար ինժեների կոչում։

Ավտո-ճանապարհային Փակուլտետի ուսումնական պլանը կազմվում է 26 ընդհանուր ու մասնագիտական 8 Փակուլտատիվ դիսցիլիններից։ Ուսումնական պլանի մեջ մեծ տեղ ե հատկացված ուսումնական և արտադրական պրակտիկաներին, վորոնք կազմակերպվում են 2-րդ, 3-րդ և 4-րդ կուրսերում։ Պրակտիկայի ընդհանուր տեղողությունն է 33 վեցորյակ, վորոնք ուսումնական պրակտիկա 9 վեցորյակ, իսկ արտադրական՝ 24։

Ավտո-ճանապարհային Փակուլտետի արտադրական պրակտիկան կազմակերպվում է 3 հերթով։ 1-ին պրակտիկան տեղի յեռնենում 2-րդ կուրսում՝ 2 վեցորյակ տեղողությամբ։ 2-րդ և 3-րդ պրակտիկաները, վորոնք տեղում են 10 և 12 վեցորյակ, կազմակերպվում են Հայաստանի սահմաններից դուրս Սիության ճանապարհաշինարարության ամենալավ կամ ըջաշինարարական որյեկտներում։

Ավտո-ճանապարհային Փակուլտետի ուսումնական պլանով նախատեսված է 12 կուրսային նախադիմ և 16 կուրսային աշխատանք։

Ավտո-ճանապարհային Փակուլտետ ավարտողները կարող են աշխատել վորոնք ճանապարհների և նրանց արհեստական կա-

ռուցվածքների (կամուրջներ, խողովակներ և այլն) կառուցողական աշխատանքների զեկավարներ, ինժեներներներ, ճանապարհային ռեզամաների ակտուատներ, ողնականներ, ճանապարհային ախարժեային հաղորդակերպությունների ինժեներներ, հետազոտական խմբերի զեկավարներ և այլն։

Պոլիտեխնիկ ինստիտուտի յերեկոյան բաժինն ունի բոլոր այն մասնագիտությունները, վորոնք կան ցերեկային բաժնում, բացի այդ, յերեկոյան բաժինն ունի նաև ելեկտրո-էներգետիկ ֆակուլտետ հետևյալ ամբիոններով։

1) Ելեկտրոսեխնիկայի հիմունքներ

2) Ելեկտրո-ցանցի և սիստեմի

3) Կենտրոնացման համական

4) Ելեկտրո-մեքենաներ և ինուական պրիբուններ

5) Բարձր լարվածության տեխնիկա

Յերեկոյան բաժնի ուսման տեղողությունն է 6 տարի՝ ներառյալ գիտումային նախադիմը։

Պարագանելները լինում են ամեն որ-յերեկոյան հերթին։

Յերեկոյան բաժնի բոլոր Փակուլտետների ուսումնական պլաններն ու դիսցիլինները նույն են, ինչ վոր ցերեկային բաժնում։

Ավարտողներն ստանում են ինժեների կոչում ըստ մասնագիտությունների։

1940/41 ուսուաբան՝ ԽՍՀՄ-ի մեկնին կից բարձրագույն գործոցների Համամիութենական Կոմիտեյի կողմից հաստատված ընդունելության կանոնները տարածվում են նաև յերեկոյան բաժնն ընդունվողների վրա։

Դիրեկտիվ։

1940 թ. ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՌԵՍՈՒՄՆԱԿԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՆԴՈՒՆՎԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

1) Բարձրագույն ուսումնական հաստատություններն ընդունվում են Խորհրդային Միության 17-ից մինչև 35 տարեկան լեռներու բոլոր քաղաքացիները, վորոնք ունեն լրիվ միջնակարգ կրթություն (տասնամյակ, բանֆակ, տեխնիկում, մեծահասակների համար միջնակարգ դպրոց, ուսումնարան, միջնակարգ բժշկական դպրոց և զինվորական ուսումնարան) կամ վորոնք ստացել են միջնակարգ դպրոցի ավարտման վեճայական եքստերնատիկարգությամբ:

Ծանոթություն .—ա) Այն անձերին, վորոնք 2-րդ աստիճանի դպրոցը (իննամյակ), կամ ՌԵԽՍՀ-ի և ԲԽՍՀ-ի յեռամյա արհեստագիտական դպրոցները՝ յոթամյակի բաղայի վրա, ավարտել են մինչև 1935 թիվը, թույլատրվում են ընդունելության քննություններին մասնակցել միջնակարգ դպրոցներն ավարտածների հետ հայտարարագեն:

բ) Այն անձերին, վորոնք ավարտել են տեխնիկում (միջնակարգ բժշկական դպրոց, ուսումնարան) թույլատրվում են մասնակցել ընդունելության քննություններին, յեթե միայն նրանք ունեն որենքով սահմանված 3 տարվա պրտաղրական ստաժ:

Հեշտագույն չի պահանջվում այն անձնավորություններից, վորոնք կենացործկոմի և ԺԿԽ-ի՝ 1933 թ. սեպտեմբերի 15-ի վորոշման համաձայն մանում են յուրաքանչյուր տեխնիկումի շրջանավարտների 5 %-ի մեջ, նաև յերեկոյան բաժանմունքն ընդունավորներից:

2) Բարձրագույն ուսումնական հաստատություններն ընդունվում բոլոր անձերը, բացառությամբ 5-րդ կետում նշվածների, յենթարկվում են ընդունելության քննության քննությունների հետեւյալ առարկաներից.

ա) ոռուսաց լեզու (դրամոր շարադրություն, քերականու-

թյուն, զրականություն): Այն բարձրագույն ուսումնական հաստատություններում, ուր դասավանդումը կատարվում է այլ լեզուներով, յենթարկվում են նաև քննության այն լեզվից, վորովտեղի յեւ ունենում դասավանդումը տվյալ բարձրագույն ուսումնական հաստատությունում:

բ) ԽՍՀՄ ժողովուրդների պատմություն և ԽՍՀՄ Սահմանադրություն:

գ) մաթեմատիկա

դ) Փիզիկա

ե) քիմիա

դ) վորեւ մեկ ոտար լեզվից—անգլերեն, գերմաներեն կամ ֆրանսերեն—ընդունվողի ընտրությամբ:

Գյուղատնտեսական, պատմական և լեզվաբանական, իրավաբանական, տնտեսագիտական և աշխարհագրական բարձրագույն ուսումնական հաստատությունները և ֆակուլտետներն ընդունվողները յենթարկվում են լրացուցիչ քննությունների՝ նկարչությունից և գծադրությունից, իսկ կինեմատոգրաֆիայի, ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտներն ու գեղարվեստական, յերաժշտական և թատերական բարձրագույն դպրոցներն ընդունավորները՝ քննությունների ըստ ժամանակիտության:

3) Ընդունելության քննությունները կատարվում են ԽՍՀՄ ժկի-ին կից՝ Բարձրագույն դպրոցի գործերի համարիութենական կոմիտեյի կողմից հաստատված ծրագրերով. ոռուսաց լեզվի և այն լեզվի, վորով դասավանդվում է տվյալ բարձրագույն ուսումնական հաստատությունում, նույնպես և մաթեմատիկայի քննությունները կատարվում են բանավոր և գրավոր, մնացած բոլոր առարկաներից—միայն բանավոր:

Մաթեմատիկայի, ինչպես և ոռուսաց լեզվի և այն լեզվի, վորով դասավանդվում է տվյալ բարձրագույն ուսումնական հաստատությունում, գնահատականը կատարվում է սուանձին՝ գրավոր և բանավոր քննությունների արդյունքների համաձայն և դրվում է յերկու թվանշան:

Յերկորոր անդամ քննվելը չի թույլատրվում:

4) Ընդունելության քննությունները տվյալ առաջարկանու-

այսինքն նրանցից, ովքեր ստացել են «բավարարից» վոչ ցածը՝ թվանշան, ընդունվում են ավելի բարձր գնահատական ստացածները: Այն անձերը, վորոնք քննությունները բռնել, սակայն կոնկուրսի պատճառով չեն ընդունվել. իրենց ցանկացած Փակուլտետը, կարող են ընդունվել ուրիշ Փակուլտետ, յեթե միայն այդ Փակուլտետի քննությունները բռնած ու արդեն հաջի առնվածթեկնածուներից բացի կլինին ելի ազատ տեղեր. այս դեպքում նրանք պետք ե հանձնեն այդ Փակուլտետի համար սահմանված առարկաները:

5) Տասնամյա դպրոցը դերազանցիկի վկայականով ավարտածները, նույնպես և 1940 թվին բանֆակ, մեծահասակների միջնակարգ դպրոց ավարտածները, վորոնք բոլոր առարկաներից, բացի դժագրությունից, նկարչությունից և Փիդկուլտուրացեց, ունեն «դերապանց» թվանշաններ—բարձրագույն ուսումնական հաստատություններն ընդունվում են առանց ընդունելության քննությունների:

Այդ իրավունքը տարածվում է նաև միջնակարգ դպրոցն եքստենսատի կարգով գերազանց ավարտածների վրա, ինչպես և տեխնիկումներն (ուսումնարանները) ավարտածների վրա, վորոնք բոլոր առարկաներից (բացի դժագրությունից, նկարչությունից և Փիդկուլտուրացից) ունեն «դերապանց» թվանշաններ, մտնում են յուրաքանչյուր տեխնիկումի շրջանավարտների 5%-ի մեջ և բարձրագույն ուսումնական հաստատություններն են ընդունվում բայց իրենց մասնագիտության:

Մասնություն.—1. Ճարտարապետական և շինարարական մասնագիտություններն ընդունվող գերազանցիկները յենթավելում են ընդունելության քննությունների՝ նկարչությունից և դժագրությունից, իսկ գեղարվեստական, յերաժշտական, թատերական և Փիդկուլտուրական բարձրագույն ուսումնական հաստատություններն ընդունվողները յենթարկվում են քննությունների ըստ մասնագիտության:

2. Միջնակարգ բժշկական դպրոցն ավարտած գերազանցիկներն ընդունելության քննությունները հանձնում են ընդհանուր հիմունքներով:

6. Բարձրագույն ուսումնական հաստատություններն ընդունվելու դիմումների ընդունելությունը կատարվում է հունիսի 20-ից մինչև հուլիսի 31-ը:

7. Դիմումի մեջ պետք է նշված լինի, թե դիմուլը վոր Փակուլտետն ու մասնագիտությունն ե ընտրել: Դիմումները արվում են բարձրագույն ուսումնական հաստատության դիրեկտորի անունով, կցելով՝

ա) ինքնակենսադրություն

բ) վկայական միջնակարգ դպրոցն ավարտելու մասին (ինկականը)

շ) անձնադիրը (ներկայացվում է անձամբ)

դ) յերեք հաս լուսանկար (նկարված առանց դիմարկի, 3—4 ամ. չափի)

ե) տեղեկանք դիմուրական դրության մասին (զինազարտների համարը):

7) Դիրեկտորին կից և նրա նախագահությամբ կազմակերպվում ե ընդունելության հանձնաժողով հետեւյալ կազմով՝

Դիրեկտորի տեղակալ ուսումնական և գիտական մասի գծով, Փակուլտետների գեկաններ և յերկու-յերեք պրոֆեսոր: Ընդունելության հանձնաժողովը քննում է ներկայացրած բոլոր դիմումները և կազմում է ընդունելության քննություններին թույլատրված անձերի ցուցակը:

Դիրեկտորը և ընդունելության հանձնաժողովի անդամները պարտավոր են հայտնել դիմուլին, թե նրան թույլատրվում է արդյոք մասնակցել ընդունելության քննություններին:

Դիմունելության քննություններին չթույլատրվելու մասին բողոքներ կարելի յետ տալ համապատասխան ժողկոմատի կամ գերատեսչության ուսումնական հաստատությունների վարչությանը, կցելով փաստաթղթերը (ինքնակենսադրություն, ավարտման վկայականի պատճեն և բարձրագույն ուսումնական հաստատության դիրեկտորի ծանուցումը՝ մերժման պատճառների մասին):

Ուսումնական հաստատությունների վարչությունը պարտավոր է պատասխանել՝ բողոք ստանալու մոմենտից վոչ ուշ, քան 3 որվա ընթացքում:

8) Ընդունելության քննությունները կատարվում են ողոստուի 1-ից մինչև 20-ը:

9) Ուսանողների ընդունումը կատարվում է ոգոստոսի 21-ից մինչև 25-ը:

Նանոքություն. — Այս բարձրագույն ուսումնական հաստատություններում և Փակուլտետներում, վորտեղ գերադանցիկների դիմումների քանակը գերազանցում է ազատ աեղերի 50%-ից, գիրեկտորին թույլատրվում է գերազանցիկների ընդունումը կատարել ողոստոսի 1-ից մինչև 10-ը, ապահովելով գերազանցիկների համար ազատ տեղերի 60%-ը:

10) Ընդունելության քննությունները կատարվում են հասուկ ստուգող հանձնաժողովների կողմից, վորոնց նշանակում է դիեկտորը:

11) Ամեն մի ընդունվողի արվում է քննական թերթիկ իր լուսանկարով:

12) Ինդունելության քննությունների արդյունքները վորոշվում են առանձին լրաց յուրաքանչյուր առարկայի, հետեւ դնահատականներով (թվանշաններով) — «գերազանց», «լավ», «միջակ», «անբավարար»:

13) Բարձրագույն ուսումնական հաստատության դիրեկտորը կազմակերպում է բոլոր ընդունվողների թեշկական քննություն. այն հիմնադրությունների ցանկը, վորոնք արգելակում են համապատասխան բարձրագույն ուսումնական հաստատությունն ընդունվելուն, հաստատվում է ԽՍՀՄ Առժողկոմատի և Բարձրագույն դպրոցի գործերի կոմիտեյի կողմից:

14) Ստուգման և թեշկական քննության արդյունքները հաճախ նշնվում են ընդունելության հանձնաժողովին, վորը կայացնում է վորոշում բարձրագույն ուսումնական հաստատությունն ընդունելու մասին:

Բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունվելը կատարվում է դիրեկտորի հրամանով:

15) Բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունված և սեպտեմբերի 1-ից առանց հարգելի պատճառների պարագաներին չեկած անձերն ուսանողների հաշվից հանդում են:

16) Բարձրագույն ուսումնական հաստատությունների դիրեկտորներին թույլատրվում է, ազատ տեղեր լինելու գետքում, ուսանողների թվում ընդունել այն անձերին, վորոնք հաջող քննություննեն բոնել ուրիշ բարձրագույն դպրոցում, բայց չեն ընդունվել ազատ տեղ չենելու կամ ըստ առողջության վիճակի տվյալ մասնագիտության պահանջներին համապատասխան չենելու պատճառով:

Ընդունելությունը կատարվում է տվյալ ԲՈՒՀ-ի համար սահմանված առարկաները հանձնելուց հետո, ընդլուրում հաշվի յեն առնվում ուրիշ ԲՈՒՀ-ում հանձնած առարկաները:

Ուրիշ բարձրագույն ուսումնական հաստատությունում քըննություն բոնածին ահմատ անձերի համար զիմումներ ներկայացնելու վերջին ժամկետը նշանակվում է սեպտեմբերի 5-ը: Նույն ժամկետը սահմանվում է այն գերազանցիկների համար, վորոնք չեն ընդունվել ուրիշ բարձրագույն ուսումնական հաստատություն ազատ տեղեր չենելու պատճառով:

17) Ուսանողների թվում չհաշվերու առթիվ բողոքներ կարելի յետական ուսումնական առարկա սկիզբը, համապատասխան ժողկոմատի (գերազանչության) ուսումնական հաստատությունների վարչության, կցելով փաստաթղթերը (ինքնակենսագրություն, ավարտման վկայականի պատճեն, քննող և ընդունող հանձնաժողովների արձանագրություններից քաղվածքներ):

Ուսումնական հաստատությունների վարչությունը պարտավոր և պատասխանել բողոքին, այն ստացվելու մոմենտից վոչ ուշ քան 3 որվա ընթացքում:

18) Քննություններին չմույլարված, կամ իրենց ցանկությամբ չմասնակցած, կամ քննությունները չբոնած անձերի, նույնպես և քննությունները բոնած, սակայն առատ տեղեր չենելու կամ առողջության վիճակի պատճառով բարձրագույն ուսումնական հաստատությունները չընդունված անձերի ներկայացրած փաստաթղթերը վերադարձվում են նրանց կողմից դիմում ստացվելուց կամ ընդունող հանձնաժողովի կողմից մերժելու մասին վորոշում կայացնելուց հետո վոչ ուշ քան 2 որվա ընթացքում:

ԽՍՀՄ ԺԿԿ-ին ԿիՅ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՑՆ ԴՊՐՈՑԻ
ԳՈՐԾԵՐԻ ՀԱՄԱՍՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՅԻ
ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԿԱՅՏԱՆՈՎ



ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԾՐԱԳԻՐ

ՀՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. ԹՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Լավ գիտենալ ամբողջ և կոտորակային թվերով կատարվող գործողությունները:

2. Թվերի՝ 2-ի, 3-ի, 4-ի, 5-ի, 9-ի և 25-ի վրա բաժանելիության հատկանիշները: Թվերի վերածումը պարզ բազմապատկիչների, ամենափոքր ընդհանուր բազմապատիկը և ամենամեծ ընդհանուր բաժանարարը գտնելը:

3. Հասարակ կոտորակների վերածումը տասնորդական կոտորակների և ընդհակառակը: Պարբերական տասնորդական կոտորակներ:

4. Զավերի մետրական սիստեմը:

5. Քանորդական հարարերություն և քանորդական համեմատություն: Քանորդական համեմատության հիմնական հատկությունը: Մեծությունների ուղիղ և հակադարձ համեմատականությունը: Հասկացողություն միջին թվարանականի և միջին յերկաչափականի մասին: Համեմատական բաժանում:

6. Հիմնական խնդիրներ տոկոսների վերաբերյալ:

2. ՀԱՅՐԱԿԱՐԱՎՈՐ

1. Հանրահաշվական սիմվոլների ճշգրիտ ու դիտակցական ողտագործումը, հանրահաշվական բանաձևերի ընթերցումը, նրանց կազմումը կոնկրետ առաջարկությունների հիման վրա և թվական արժեքների (նշանակություններ) գտնելը: Գործողությունների կարգը:

2. Գործողություններ հարաբերական թվերի վրա և նրանց հիմնական հատկությունները: Թվային առանցք:

3. Հանրահաշվական ամբողջ արտահայտությունները և նրանց հետ կատարվող գործողությունները (ներառյալ նաև բազմանդամների բաժանումը բազմանդամների վրա):

4. Հանրահաշվական արտահայտությունների կրճատ բազմապատկումն ու բաժանումն ըստ հետեւյալ բանաձևերի:

$(a \pm b)^2$; $(a \pm b)^3$; $a^2 - b^2$; $a^3 \pm b^3$; $a^n \pm b^n$, $j_{n,p}$ «ո՞»-ը ամբողջ $n > 0$:

($x - a$) $-ի$ վրա ամբողջ բազմանդամի բաժանելիության թեորեմը (β եզրայի թեորեմը):

5. Բազմապատկիչների վերլուծելու ամենապարզ դեպքերը.

ա) ընդհանուր բազմապատկիչը փակազմությունը բերելը,

բ) կրճատ բազմապատկման բանաձևերից ուղղվելը և

գ) խմբավորումների մեթոդը:

6. Հանրահաշվական կոտրակների ձևափոխումները և գործողությունները նրանց հետ:

7. Հավաքարության յերկու տեսակ՝ նույնություն և հավասարում: Հավաքարումների հիմնական հատկությունները: Մեկ անհայտով առաջնային աստիճանի հավաքարումներ կազմելն ու լուծելը:

8. Յերկու և յերեք տնհայտով առաջին աստիճանի հավասարումների սխալեմ կազմելն ու լուծելը: Առաջին աստիճանի յերկու անհայտով յերկու հավաքարումների սխալեմի հետազոտումը:

9. Անհավաքարությունների ընդհանուր հատկությունները: Անհավաքարության յերկու տեսակ:

1-ին աստիճանի անհավաքարության լուծումը և 1-ին աստիճանի անհավաքարության սխալեմը:

10. Հասկացողություն ֆունկցիայի մասին: Իրողութական և հայտատուն մեծություններ, կախյալ և անկախ փոփոխական մեծություններ:

Հասկացողություն հարթության կետի կոորդինատների մասին: Ուղիղ և հակադարձ համեմատական կապակցության գրաֆիկը: Հավաքարումների գրաֆիկը:

$y = kx + b$ $y = ax^2 + bx + c$

11. Արտադրյալի, աստիճանի և կոտրակի աստիճան բարձրացնելը:

12. Արմատ հանելը: Ամբողջ թվերից, հասարակ և տասնորդական կոտրահիներից քառակուսի արմատ հանելը: Մուտքայոր արմատ հանելը $0,1$, $0,01$, $0,001$ և այլն ճշգությամբ: Նշանների կանոն արմատ հանելիս:

13. Արտադրյալից, կոտրակից և աստիճանից վորեն աստիճան արմատ հանելը:

Հասկացողություն իռացիոնալ թվի մասին:

Գործողությունները արմատների վրա:

Կոտորակները հայտարարի իռացիոնալից ազատելը:

14. Մեկ անհայտով 2-րդ աստիճանի հավասարում կազմելը և լուծելը: Քառակուսի հավասարման գործակելցների և արմատների կապակցությունը: Քառակուսի հավասարման արմատների հետազոտությունը: 2-րդ աստիճանի յեռանդամի վերլուծումը բազմապատկիշների:

15. Յերկառակուսի (բիկվաղբատ) հավասարումներ: Արմատանշանի տակ անհայտ պարունակող հավասարումներ: Բարձր աստիճանի հավասարումներ՝ յերկանդամ, յեռանդամ, վերդադրման 3-րդ և 4-րդ աստիճանի:

2 անհայտով 2-րդ աստիճանի հավասարումների սխալմաներ կազմելը և լուծելը:

16. Կոմպլեքս թվեր և չորս գործողություններ նրանց հետ: Կոմպլեքս թվի յեռանկյունաչափական ձևը:

17. Թվաբանական պրոդրեսիա: Թվաբանական պրոդրեսիայի վորեա անդամների գումարի հաշվումը:

18. Յերկառաչափական պրոդրեսիա: Յերկառաչափական պրոդրեսիայի վորեա անդամի և նրա անդամների գումարի հաշվումը: Անվերջ յերկառաչափական պրոդրեսիա: Անվերջ նվազող յերկառաչափական պրոդրեսիայի անդամների գումարի հաշվումը:

19. Յուցչի հասկացողության ընդհանրացումը, դրո, բայցասական և կոտորակային ցուցիչներ ունեցող աստիճան: Գործողություններ ցանկացած ցուցիչներ ունեցող աստիճանների վրա:

20. Հասկացողություն լոգարիթմի մասին: Լոգարիթմների ընդհանուր հատկությունները: Լոգարիթմական ֆունկցիայի գրաֆիկը:

21. Արտադրյալի, քանորդի, աստիճանի և արմատի լոգարիթմները: Արտահայտություններ լոգարիթմելը: Պոտենցիալը: Լոգարիթմների մի սխալմից մյուսին անցնելու մոդուլը:

22. Տասնորդական լոգարիթմների հատկությունները: Լոգարիթմների աղյուսակների ողնությամբ հաշվելը (4 կամ 5 նիշոց):

23. Յուցչային և լոգարիթմական հավասարումներ լուծելը: Բարդ տոկոսների հաշվումը:

24. Միացությունների ձևերը՝ կարգավորություններ, տեղափոխություններ և զուղաղություններ: Կարգավորություններ:

թի, տեղափոխությունների և զուղաղությունների թվի համար բանաձևների արտածումը: $C_m^n = C_m^{n-m} \cdot C_{m-n}^n$ հավասարության ավագուցումը:

25. (x+a), (x+b), ..., (x+k)=X^n + S, X^{n-1}+..., ֆորմուլայի արտածումը:

Հասկացողություն լիակատար մաթեմատիկական ինդուկցիայի մեթոդի մասին: Եյուսոնի բինոմի բանաձևի արտածումն ամբողջ և գրական ցուցչի համար: Ընդհանուր անդամի բանաձևը:

(x+a)^m -ի վերլուծման անդամների և գործակելցների հատկությունները:

3. Յերկառաչափություն

1. Ուղիղ, ճառագայթ, հատված: Ուղիղ գծի հատվածների գումարն ու տարրերությունը, հասկացողություն անկյան մասին, անկյունների գումարն ու տարրերությունը: Ուղիղ և կից անկյունների հատկությունը: Հակադիր անկյունների հատկությունը:

2. Յեռանկյունի (նրա միջնադերը, բարձրությունները և կիսորդները): Յեռանկյունների տեսակները:

3. Հավասարասորունք յեռանկյան հատկությունները:

Յեռանկյունների հավասարության յերեք դեպքերը: Յեռանկյան արտաքին անկյան թերեմը:

4. Յեռանկյան կողմերի և անկյունների կապակցությունը, ուղղահայաց և թեք գծերի հատկությունը: Ուղղանկյուն յեռանկյունների հավասարությունը:

5. Հասկացողություն կետերի յերկառաչափական տեղի մասին: Ուղիղի հատվածի միջուղղահայացի (միջակետում կանգնեցրած ուղղահայացի) և անկյան կիսորդի հատկությունները:

6. Կառուցման հիմնական խնդիրներ՝
ա) ուղիղի վրա տվյալ կետում կառուցել տվյալ անկյան հավասար անկյուն,

բ) տվյալ անկյունը կիսել,
գ) տվյալ հատվածը կիսել,

դ) ուղիղի վրա տվյալ կետում ուղղահայաց կանոնեցնել,
ե) ուղիղից դուրս տվյալ կետից ուղղահայաց իջեցնել,

դ) կառուցել յեռանկյունի, յերբ տրված են 3 կողմերը, մի կողմը և յերկու անկյունները, յերկու կողմերն ու նրանցով կազմված անկյունը:

7. Զուգահեռ ուղիղներ: Զուգահեռ ուղիղների աքսիոմանուշերկու ուղիղների զուգահեռության պայմանները: Ուղիղից գուրս գտնվող կետից այդ ուղիղին զուգահեռ անցկացնելը:

8. Զուգահեռ և ուղղահայաց կողմեր ունեցող անկյունների հատկությունները:

Ցեռանկյան և բազմանկյան անկյունների գումարումը:

9. Զուգահեռագիծ և սեղան: Զուգահեռագիծի կողմերի և անկյունների հատկությունները: Զուգահեռագիծի, ուղղանկյան, չեղանկյան և քառակուսու անկյունագծերի հատկությունները:

10. Ցեռանկյան և սեղանի միջին գծի հատկությունները: Հատվածի բաժանումը միքանի համաստ մասերի:

11. Երդագիծ, կենտրոն, տրամադիմ, շառավիղ: Կենտրոնական անկյուններ, աղեղներ և նրանց ձևող լարերը: Ցոչափողները: Շոշափման կետից անցկացրած շառավիղի հատկությունները: Ցեռանկյան մեջ ներդած ըրջանի, նրա շուրջն արտադած ըրջանի կենտրոնը:

12. Կենտրոնական ներդածված, լարով ու շոշափողով կազմված և արտադած անկյունների չափումը: Արտաքին կետից ըրջանագծին շոշափող տանելը:

13. Հասկացողություն համաչափելի և անհամաչափելի հատվածների մասին: Համեմատական հատվածներ անկյան կողմնը հատող զուգահեռագծերի հատկությունները: Հատվածի բաժանումը տված հատվածներին համեմատական մասերի: Տված յերեք հատվածներին համեմատական 4-րդ հատվածի կառուցումը:

14. Ցեռանկյունների և բազմանկյունների նմանությունը: Տված յեռանկյան և բազմանկյան նման յեռանկյունի և բազմանկյունի կառուցելը: Ցեռանկյունների նմանության թեորեմները: Ցեռանկյան ներքին անկյան կիսորդի հատկության վերաբերյալ թեորեմը:

15. Մետրական հարաբերակցություններն ուղղանկյուն յեռանկյուն մեջ: Ուղիղ անկյան գագաթից ներքնածերդի վրա իջեցրած ուղղահայացի հատկությունը: Պյութագորի թեորեմը: Ցեռանկյան սուր և բութ անկյան դիմաց ընկած կողմի քառակուսին: Համեմատական հատվածները ըրջանի մեջ:

$$X = \sqrt{a^2 + b^2}, X = \frac{ab}{c}, X = \frac{a^2}{c}, X = \sqrt{-ab} \quad \text{արտահայտությունների կառուցումը:}$$

16. Կանոնակոր բազմանկյուններ: Կանոնակոր բազմանկյան մեջ և շուրջը ինչպես ներդածել և արտադել ըրջագիծ: Կա-

նոնակոր բազմանկյունների նմանությունը և նրանց պարագծերի հարաբերությունը:

17. Ներդածված ու արտադածված կանոնակոր վեցանկյան, քառակուսու և յեռանկյան կողմի արտահայտությունը շառավղի միջոցով:

18. Ուղղանկյան, զուգահեռագիծի, յեռանկյան, սեղանի և կանոնակոր բազմանկյան մակերեսների չափումը: Ցեռանկյան մակերեսի բանածնը նրա 3 կողմերի միջոցով: Նման յեռանկյունների և բազմանկյունների մակերեսների հարաբերության վերաբերյալ թեորեմը:

19. Հասկացողություն սահմանի մասին: Երդագիծի յերկարությունը վրայես ներդածված և արտադածված կանոնակոր բազմանկյունների պարագծերի սահման, նրանց կողմերի թիվն անվերջ կրկնապատճելու դեպքում: Երջանագիծի յերկարության բանաձեւը: Հասկացողություն ու թիվը հաշվելու մասին:

Երջանի մակերեսը, վորպես ներդածված և արտադածված կանոնակոր բազմանկյունների մակերեսների սահման:

20. Հարթության ուղղահայաց ուղիղը: Հարթության նկատմամբ ուղիղ գծի ուղղահայացության հայտանիշը: Ցերեք ուղղահայացների թեորեմը:

21. Ուղիղ գծի ու հարթության և յերկու հարթությունների զուգահեռության հայտանիշերը:

22. Ցերկնիստ անկյունները և նրանց գծային անկյունները: Ցերկնիստ անկյունները զծայիններով չափելը: Ուղղահայաց հարթությունները: Ցերկու հարթությունների ուղղահայացության հայտանիշը:

23. Ուղիղ գծի և հարթության միջև կազմված անկյունը: Խաչաձև ուղիղներ և նրանց միջև կազմված անկյունը:

24. Պրիզմաներ, պրիզմայի կողմնային մակերեսությը, զուգահեռանիստ, նրա նիստերի և անկյունագծերի հատկությունները, նրա անկյունագծի և յերեք չափումների միջև յեղած առնչությունը: Ուղղանկյուն զուգահեռանիստ:

25. Բուրգ: Բուրգի զուգահեռ հատվածների հատկությունները, լրիվ և հատած բուրգի կողմնային մակերեսությը:

26. Պրիզմայի, լրիվ և հատված կոնի ծավալը:

27. Գլանի, կոնի և հատված կոնի կողմնային մակերեսությը և ծավալը:

28. Գունդ, գնդի հատումը հարթությամբ: Գնդի շոշափող

հարթությունը: Գնդի մեծ և վոքր շրջանները: Գնդի մակերես-
վույթը: Գնդային գոտու և սեղմենտի մակերեսությը: Գնդի ծա-
վալը: Գնդային սեկտորի ծավալը:

29. Պարզապույն մարմինների պտտման մակերեսությները և
ծավալների հաշվումը:

4. Յեռանկյունաչափություն

1. Յեռանկյունաչափական Փունկցիաները՝ վորևե անկյան
սինուսը, կոսինուսը, տանգենսը, կոտանգենսը, սեկանսը, կոսե-
կանսը: 30, 60 և 45 անկյունների Փունկցիաները:

Յեռանկյունաչափության Փունկցիաների փոփոխումը՝ կո-
սղակցված անկյան 0-ից մինչև 360° փոփոխվելու հետ:

Հասկացողություն յեռանկյունաչափական Փունկցիաների
պարբերականության մասին:

2. Միենույն արգումենտի յեռանկյունաչափական Փունկ-
ցիաների կապակցությունը: Յեռանկյունաչափական Փունկցիա-
ների տվյալ թվական արժեքին (նշանակության) համապատաս-
խանող անկյան կառուցումը:

Միենույն սինուս, կոսինուս, տանգենս, կոտանգենս ունե-
ցող անկյունների ընդհանուր ձևը:

3. Դրական և բացասական անկյունները, բացասական ար-
գումենտների յեռանկյունաչափական Փունկցիաները:

4. Անկյունների չափման յերկու յեղանակը: Բաղիան:

5. Վորևե անկյան յեռանկյունաչափական Փունկցիաների վե-
րածումը սուր անկյան յեռանկյունաչափական Փունկցիաների:

6. Գումարման թեորեմն ու նրա հետևանքները՝

$$\sin(a \pm \beta); \cos(a \pm \beta); \operatorname{tg}(a \pm \beta)$$

7. Կրկնակի և կես անկյան յեռանկյունաչափական Փունկցիա-
ները:

8. Յեռանկյունաչափական արտահայտությունները լոգարիթ-
մելու համար հարմար տեսքի բերելը: $\sin a \pm \sin \beta; \cos a \pm \cos \beta$
 $\operatorname{tg} a \pm \operatorname{tg} \beta$ բանաձևերը:

9. Մինուսի, կոսինուսի և տանգենսի գրաֆիկները:

10. Յեռանկյունաչափական հավասարումների լուծումը:

11. Ուղղանկյուն յեռանկյունիների լուծումը:

12. Եղանակյուն յեռանկյունիների լուծումը: Մինուսների և
կոսինուսների թեորեմները. յեռանկյան մակերեսի վորոշումը
նրա յերկու կողմերի և նրանց միջև կազմված անկյան միջոցով:

Ներդաշված և արտադաշված շրջանի շառավղի արտահայտու-
թյունը:

13. Հասկացնողություն հակադարձ յեռանկյունաչափական
ֆունկցիաների մասին, նրանց գլխավոր նշանակութունները:

14. Յեռանկյունաչափական կիրառումը յերկրաչափական
խնդիրներ լուծելիս:

ՖԻԶԻԿԱՅԻ ԾՐԱԳԻՐ

1. ՄԵԽԱՆԻԿԻ

1. Մինույն կողմն ուղղված ուժերի գումարումը: Ուժերի գումարումը, յեր նրանք իրար հետ անլյուն են կազմում: Ուժի աարաբաղացումն իրար հետ անկյուն կազմող գործող յերկու ուժերի: Թեք հարթության վրա մարմնի հավասարակշռության պայմանները: Մինույն և հակառակ կողմն ուղղված գուգահեռ ուժերի գումարումը: Մի ուժի վերընծումը յերկու գուգահեռ ուժերի, ուղղված մինույն և տարբեր կողմերը: 1-ին և 2-րդ կարգի լծակների հավասարակշռության պայմանները: Պարզ մեջնաները: Մարմնի ծանրության կենտրոնը: Մեկ կետում ամրացված մարմնների հավասարակշռության տեսակները: Հորիզոնական հարթության վրա հենքած մարմինների հավասարակշռության պայմանները:

2. Հավասարաչափ ուղղագիծ շարժում: Արագություն: Այդ շարժման հավասարումը: Այդ շարժման ճանապարհի և արագության գրաֆիկը՝ կախված ժամանակից:

3. Տարթման առաջին որենքը (իներցիայի որենք): Տարթումը հավասարակշռության տակ:

4. Փոփոխական շարժում: Միջին արագություն: Արագությունը տվյալ մոմենտում: Արագուցում: Հավասարաչափ արագուցող շարթում առանց սկզբնական արագության: Այդ շարժման արագության և ճանապարհի գրաֆիկը: Արագության բանաձև՝ $V = at; S = \frac{at^2}{2}$ բանաձևի ստացումը միջին արագության հասկացության ողնությամբ և գրաֆիկական ճանապարհով: $V^2 = 2as$ բանաձևի ստացումը: Հավասարաչափ արագացող շարթում սկզբնական արագությամբ: Նախկին բանաձևերից հավասարաչափ դանդաղացող շարթման բանաձևի ստացումը: Այդ շարժման արագության գրաֆիկները: Հավասարաչափ փոփոխական շարժման ընդհանրացած բանաձևերը՝ $S = V_0 t + \frac{at^2}{2}$

4. Մարմնի կշիռը և մասսան: Խտություն: Նյուտոնի՝ շարժման 2-րդ որենքը՝ հարաբերությունը ուժի, մասսայի և արագացման միջև.

Դիեն: Մտեն: Ուժերի արտահայտությունը կշռային միավորներով: Մեկ գրամ ուժի և զինք կազմը: C. G. S., M.T.S. և տեխնիկական սիստեմները: Հիմնական և ածանցյալ մեծություններն այդ սիստեմներում: Մարմինների ազատ անկումը: Ազատ ընկնող մարմնի արագացումը. ողի գիմադրության ազդեցությունը:

5. Նյուտոնի յերրորդ որենքը՝ ազդման և հակագուման հավասարությունը: Ազդման և հակագուման ուժերի կիրառման կետերը:

6. Մեխանիկական աշխատանքի բանաձևերը: Եներգիա: Կինետիկ և պոտենցիալ եներգիա: Պոտենցիալ եներգիայի անցնելը կինետիկի և ընդհակառակը: Եներգիայի պահպանման որենքը՝ մեխանիկայում: Հզորություն:

7. Տեղափոխումների գումարում և արագությունների գումարում: Հորիզոնական ուղղությամբ նետված մարմինների շարժումը: Այդ շարժման դրաֆիկական մեկնաբանումը:

8. Հավասարաչափ շարժում ըրչանազդով: Գծային արագություն: Անկյունային արագություն: Կենտրոնաձիգ արագացում: Կենտրոնաձիգ արագացման բանաձևի ստացումը: Իննորոնաձիգ և կենտրոնախույս ուժեր, նրանց կիրառման կետերը: Տեխնիկական որինակները:

9. Տիեզերական ձգողության որենքը:

10. Առաձգական մարմիններ: Զսպանակալը կշեռքներ: Դինամոմետրեր:

2. Հիմնական գաղափարներ մոլեկուլային կիմիոֆիկ տեսության մասին

Նյութի բաժանելիությունը: Մոլեկուլներ: Հասկացողությունը: Հարակցություն: Դաղափար մակերսութային ճնշման մասին: Հարակցություն: Դաղափար մակերսութային ճնշման մասին: Հեղուկների մակերսութային թաղանթը: Նրա հատկությունները: Մակերսութային լարմանթը: Թրջում: Հեղուկի բարձրանալը մադային անոթներում: Մազականության յերկույթները բնության մեջ և անխիկայում: Մոլեկուլների շարթումը: Մոլեկուլային շարթման բնույթը գաղանման, հեղուկ և պինդ մարմիններում:

3. Հեղուկներ և գագեր

Ճնշում: Պատկալի որենքը հեղուկների և գագերի համար: Ջրաբաշխան մամուլի կազմության սկզբունքը: Հեղուկի ճնշումը անոթի հատակի և պատերի վրա: Հաղորդակից անոթների որենքը համասեռ և տարածեն հեղուկների համար: Աթոնությունը: Տօրիչելիի փորձը: Նորմալ մթնոլորտային հնչման մեծությունը: Տեխնիկական մթնոլորտ: Մոդելային և մետաղային բարությար: Արքիմեդի որենքը հեղուկների և գագերի համար: Պինդ և հեղուկ մարմինների տեսակարար կշռի վորոշումն Արքիմեդի որենքի ողնությամբ: Հեղուկների մակերեսույթի վրա մարմինների լուղարու պարմանները: Արեսմետրեր: Աղաղայության ֆիզիկական հիմունքները:

Բոյլ-Մարիոտի որենքը: Այդ որենքի գրաֆիկը: Հեղուկակուր մանոմետրեր: Մետաղյա մանոմետրեր: Նորացնող, մզող ողային պոմպեր:

4. Զերմություն

1. Զերմաչափեր: Ցելիուսի և մետրյուրի շկալաներ:

2. Գծային և ծավալային ընդարձակման գործակիցներ:

Զրի ընդարձակման առանձնահատկությունները: Ընդարձակման զծային և ծավալային գործակիցների կապակցությունը: Մարմնի խտության փոփոխությունը տաքանակին: Գաղերի ընդարձակումը: Գեյլյուսակի որենքը:

Միացյալ որենքի (Բոյլ-Մարիոտ—Գեյլյուսակ) բանաձեռք: Գաղափար բացարձակ գերոյի մասին: Բացարձակ շերմային չկար:

3. Զերմության քանակ: Զերմության քանակի չափման միավորները:

Մարմինը տաքացնելու համար անհրաժեշտ ջերմության քանակը հաշվելու բանաձեռք:

Մարմնի տեսակարար ջերմունակության վորոշումը փորձնական ճանապարհով: Զերմաստիճանի վորոշումը կալորիմետրի յեղանակով: Վառելանյութի տարրեր տեսակների ջերմարարունակությունը: Տաքացուցչի ոգտակար գործողության գործակիցը:

4. Կոնվենցիան գաղերի և հեղուկների մեջ: Գաղերի, հեղուկների և պինդ մարմինների ջերմագործականությունը: Հասկացողություն ճառագայթման և ճառագայթականման մասին:

5. Հալում: Հալման ջերմություն վորոշելը փորձնական յե-

ղանակով: Մարմինների ծավալի փոփոխմելը հալվելիս և անդանալիս: Հալման կետի կախումը ճնշումից:

6. Գոլորշիացում և խտացում: Յեռում: Յեռուման աստիճանի կախումը ճնշումից: Գոլորշիագոյացման ջերմություն վորոշելը փորձնական ճանապարհով:

7. Հեղուկի հաղեցած և վոչ-հաղեցած գոլորշիացը: Երանց հատկությունները: Հաղեցած գոլորշու ճնշման կախումը ջերմաստիճանից:

8. Բացարձակ խոնավություն: Հարաբերական խոնավություն: Խոնավաչափեր:

9. Գաղերի հեղուկացումը: Կրիտիկական ջերմաստիճան: Դյուարի անությունը:

10. Զերմության մեխանիկական համարժեք: Աշխատանքի չերմային համարժեքը (Կո-Ս-ի ջուլ և Երգ-ի համար): Շոգեմեքնայի և ներքին այրման շարժիչների կազմության սխեման: Շոգեմեքնայի և ներքին այրման շարժիչի ոգտակար գործողության գործակեցը:

5. Ելեկտրականություն

1. Ցերկու տեսակ ելեկտրականություն: Ելեկտրական լիցքերի փոխազդեցությունը: Կուլոնի որենքը: Լիցքի բացարձակ և պրակտիկ միավոր (Կուլոն): Ելեկտրասկոպի կազմությունը: Ելեկտրականության բաշխումը Հաղորդիչի մակերեսույթի վրա: Լիցք հաղորդելու միջոցով: Հիմնական պատկերացումներ ելեկտրոնային թեորիայի մասին:

2. Լիցքի ելեկտրական զաշար: Ընդհանուր գաղափար պոտենցիալի մասին: Պոտենցիալների տարրերության միավոր՝ վոլտ: Ելեկտրոնակություն: Ունակության միավոր՝ Փարագ: Հարթ կոնդենսատոր, նրա կազմությունը և նշանակությունը:

3. Հոսանքի ուժը: Հոսանքի ուժի միավոր—ամպեր: Պոտենցիալների տարրերությունը հաղորդիչի ծայրերում: Ոչմի որենքը շղթայի մասի համար: Հաղորդիչների դիմալությունը: Դիմացը ուժական միավոր՝ ոհմ: Տեսակարար դիմալություն: Դիմացը ուժությունը հաշվելու բանաձեռք:

Դիմալության կախումը ջերմաստիճանից: Բեռուտաներ:

4. Հաղորդիչների հաջորդական միացում: Հաղորդիչների զուգահեռ միացում:

5. Ոչմի որենքն ամբողջ շղթայի համար: Ելեմենտների հաջորդական և զուգահեռ միացում:

6. Հոսանքի աշխատանքը և հզորությունը: Հոսանքի աշխատանքի և հզորության միավորները՝ վլուտ-կուլոն (ջոռու), վլուտ-մամպեր (վատո), վատտա-ժամ, հեկտովատ-ժամ, կիլովատ-ժամ: Ելեկտրական հոսանքի և ներդիան, նրա փոխակերպումն ևներգիայի այլ տեսակների: Ջոռու-Լենցի որենքը: Ելեկտրական լոմպեր: Տաքացնող գործիքներ: Ապահովիչներ:

